

1. Թողարկողի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է թողարկողը: Այս նկարագիրը պետք է հավասարակշռված և համակողմանի վերլուծության ենթարկի թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը: Վերլուծությունները պետք է հնարավորություն տան պատկերացում կազմել թողարկողի բիզնեսին յուրահատուկ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների վերլուծության մասին:

**Ընդհանուր տեղեկություններ Բանկի վերաբերյալ**

<i>Բանկին շնորհված վարկանիշեր</i>	<i>Moody’s միջազգային վարկանիշային գործակալության կողմից Բանկին շնորհվել է Ba3 երկարաժամկետ և NP կարճաժամկետ վարկանիշներ, ֆինանսական կայունությունը գնահատվել է “D-”: Բոլոր վարկանիշերի հեռանկարները կայուն են:</i>
<i>Մասնաճյուղերի քանակ</i>	<i>55 (49 մասնաճյուղ ՀՀ բոլոր մարզերում, 6 մասնաճյուղ ԼՂՀ-ում, ներկայացուցչություն Փարիզում)</i>
<i>Աշխատակիցների թվաքանակ</i>	<i>1067</i>
<i>Բանկի գլխամասային գրասենյակի հասցեն</i>	<i>ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչ 13 և 13/1</i>
<i>Web-կայք/URL</i>	<i>www.ashib.am, www.ashib.com</i>
<i>Հեռախոսներ</i>	<i>ընդունարան՝ (+374 10) 52 85 13 տեղեկատու՝ (+374 10) 54-04-04</i>

2009 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Բանկը՝

- իրականացրել է ակտիվ ավանդային քաղաքականություն,
- վարել է զգուշավոր վարկային քաղաքականություն,
- մատուցել է վճարահաշվարկային ծառայություններ,
- իրականացրել է ներդրումային գործառնություններ,
- ավելացրել է պլաստիկ վճարային քարտերի միջոցով տրամադրվող ծառայությունների քանակը,
- ընդլայնել է համագործակցության շրջանակները միջազգային ֆինանսական ինստիտուտների հետ:

Բանկը հանդիսանում է.

- Հայաստանի բանկերի միության անդամ,
- Հայաստանի ֆոնդային բորսայի անդամ
- Հայ-վրացական գործարար համագործակցության ասոցիացիայի անդամ,
- MasterCard/Europay համաշխարհային վճարային համակարգի փոխկապակցված անդամ,
- Visa International վճարային համակարգի լիիրավ անդամ,
- SWIFT համակարգի բաժնետեր,
- «Հայինկասացիա» ՓԲԸ բաժնետեր,
- ՀՀ տարածքում գործող «ArCa» պրոցեսինգային ընկերության բաժնետեր և լիիրավ անդամ,
- Հայաստանի հիփոթեքային շուկայի մասնակիցների միության անդամ:

**Բանկի գործունեության հիմնական արդյունքները**

**Կապիտալիզացիա**

Կապիտալ	26 983.5 մլն դրամ
Աճը կիսամյակի ընթացքում	7%
Մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգում	10%

ՀՀ բանկային համակարգում Բանկն ընդհանուր կապիտալի գծով զբաղեցնում է երկրորդ տեղը, ինչը վկայում է ներկա տնտեսական պայմաններում առաջացող ռիսկերի հաղթահարման բարձր ունակության մասին:

Կիսամյակի ընթացքում Բանկի ընդհանուր կապիտալի ավելացման հիմնական աղբյուր է հանդիսացել ստացված գուտ շահույթը (1879.4 մլն դրամ), որի գծով զբաղեցրել է առաջին տեղը ՀՀ բանկային համակարգում:

Հաշվետու ժամանակահատվածում համալրվել է գլխավոր պահուստը 287.8 մլն դրամ գումարի չափով՝ կազմելով 963.1 մլն դրամ:


**Միջոցների ներգրավում**

Ներգրավված միջոցներ	88060.0 մլն դրամ
Մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգում	10%

Ներգրավված միջոցների մեծությամբ Բանկը զբաղեցնում է երրորդ տեղը ՀՀ բանկային համակարգում:

Բանկն ապահովել է ներգրավված միջոցների դիվերսիֆիկացիա ըստ ռեսուրսների աղբյուրների՝ ներգրավելով ցպահանջ և ժամկետային ավանդներ ինչպես ֆիզիկական, իրավաբանական անձանցից, այնպես էլ միջազգային կազմակերպություններից:

30.06.09թ. դրությամբ բանկի ներգրավված միջոցների կառուցվածքը հետևյալն էր.



Կիսամյակի ընթացքում ապահովվել է ժամկետային միջոցների ավելի քան 9% աճ:

Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների մեծությունը կիսամյակի վերջում կազմել է 24301.4 մլն դրամ՝ աճելով շուրջ 20%-ով: Այս փաստը վկայում է Բանկի նկատմամբ առկա բարձր վստահության մասին, քանի որ ինչպես հայտնի է, բանկերի նկատմամբ վստահելիության աստիճանի ամենաճշգրիտ չափորոշիչը հենց ֆիզիկական անձանց ավանդների աճն է: Բանկն էլ իր հերթին ճգնաժամի պայմաններում առաջնայնությունը տվեց իր ավանդատուների շահերի պաշտպանությանը՝ ոչ միայն առաջարկելով ազատ փոխարկման հնարավորությամբ ավանդատեսակ, այլև թույլատրելով փոխարկել նախկինում ներդրված ավանդների արժույթը: Այս կիսամյակում բանկում գործող ավանդատեսակներին ավելացավ «Դրամային» նոր ավանդատեսակը:

Հաշվետու ժամանակահատվածում Բանկը ստացավ երկարաժամկետ փոխառություն World Business Capital կազմակերպությունից 10 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով, որն ուղղվելու է փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորմանը:


Արտաքին առևտրի ֆինանսավորման նպատակով Բանկին IFC-ի կողմից տրամադրվեց 5 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով վարկային գիծ: Վարկային գիծը հնարավորություն է ընձեռում Բանկին ընդլայնել արտաքին առևտրային գործարքների ոլորտում մատուցվող բանկային ծառայությունների շրջանակը:

### Միջոցների տեղաբաշխումը և Բանկի ներդրումային քաղաքականությունը

Ակտիվներ	115 043.6 մլն դրամ
Աճը կիսամյակի ընթացքում	2%
Մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգում	10%

Բանկն ակտիվների մեծությամբ զբաղեցրել է երրորդ տեղը ՀՀ բանկային համակարգում:

Կիսամյակի ընթացքում Բանկի միջոցների տեղաբաշխումը պայմանավորված է եղել ներգրավված միջոցների ժամկետային կառուցվածքով, ինչպես նաև «իրացվելիության կուտակման» քաղաքականության իրականացմամբ: Կիսամյակի վերջում Բանկի ակտիվների կառուցվածքը հետևյալն է՝



Ակտիվների ձևավորված կառուցվածքը Բանկին հնարավորություն է տալիս ժամանակին կատարել հաճախորդների պահանջները վճարումների, փոխարկումների և այլ ծառայությունների գծով, ինչպես նաև ստանալ զգալի եկամուտներ:

Պետական արժեթղթերի պորտֆելը կիսամյակի վերջում կազմել է 3'135.8 մլն դրամ:

Բանկի վարկային պորտֆելը կազմել է 64'690.3 մլն դրամ: Վարկային պորտֆելի մեջ ավանդաբար գերակշռում են արդյունաբերության, առևտրի և շինարարության ոլորտներին տրամադրված, ինչպես նաև սպառողական վարկերը:

### **Հաճախորդների քանակը, վերջինիս փոփոխության դինամիկան**

2009 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Բանկի հաճախորդների քանակը աճել է շուրջ 19%-ով և կազմել 92401, այդ թվում՝ ֆիզիկական անձ-հաճախորդների քանակը աճել է ավելի քան 22%-ով: Բանկի հաճախորդների 14.6%-ը իրավաբանական անձինք են, իսկ 85.4%-ը՝ ֆիզիկական անձինք:

Բանկը բարձր է գնահատում հաճախորդների հետ կայուն հարաբերությունները: Դրա ապացույցն այն է, որ Հայաստանի բանկային համակարգում մեր բանկն առաջինն է, որի կառուցվածքում գործում է հաճախորդների մենեջեր ինստիտուտը: Այս ինստիտուտը թույլ է տալիս հաճախորդների հետ մշտական և անմիջական կապի շնորհիվ ստեղծել երկարաժամկետ, փոխշահավետ համագործակցություն, բարձրացնել մեր ծառայությունների որակը:

### **Ռիսկերի ներկայացումը, գնահատումը**

Բանկում մեծ ուշադրություն է դարձվում ռիսկերի կառավարմանը՝ որպես բիզնեսի հուսալիության ապահովման գործոն: 2009 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ռիսկերը, որոնց հետ առնչվել է Բանկը, պայմանավորված են եղել ոչ միայն բնականոն գործունեության հետ, այլև միջազգային ֆինանսական ճգնաժամի ազդեցությամբ: Ռիսկերի ազդեցությունը մեղմելու և Բանկի դիրքերը պահպանելու նպատակով Բանկում մշակվել է ճգնաժամի հաղթահարման միջոցառումների ծրագիր՝ ուղղված վարկային, իրացվելիության, արտարժույթային, տոկոսադրույքի ռիսկերի կառավարմանը:

### **Վարկային ռիսկ**

2008թ. չորրորդ եռամսյակում դիտարկվող մակրոտնտեսական ցուցանիշների վատացումը, ներմուծման և արտահանման գների փոփոխությունը, ՀՆԱ-ի աճի տեմպերի նվազումը հանգեցրին հաճախորդների վարկունակության վատացման և դրա հետ կապված վարկերի վերադարձելիության ռիսկի առաջացման: Այս ռիսկի կառավարման նպատակով Բանկը վարել է զգուշավոր վարկային քաղաքականություն: Իրականացվել են մի շարք միջոցառումներ՝

1. խստացվել են հաճախորդների վարկունակության գնահատման չափանիշները
2. վերանայվել և խստացվել են վարկերի տրամադրման պայմանները
3. կրճատվել են է մեկ փոխառուին տրամադրվող վարկի առավելագույն չափը և վարկերի տրամադրման ժամկետները
4. հատուկ ուշադրություն է դարձվել գրավի իրական գնահատմանը, դրա իրացվելիությանը, գործող վարկերի գրավների, վարկային պարտավորությունների վիճակի մոնիթորինգին, խստացվել է ըստ բոլոր վարկատեսակների գրավ/վարկ հարաբերակցությունը,
5. մշակվել են իրավիճակի զարգացման տարբեր ստրես սցենարներ:

### **Իրացվելիության ռիսկ:**

Ֆինանսական ճգնաժամի պայմաններում բանկի կայունությունը ապահովելու նպատակով բանկը շարունակել է վարել «իրացվելիության կուտակման» քաղաքականություն: 30.06.09թ. դրությամբ ընթացիկ և ընդհանուր իրացվելիության ցուցանիշները համապատասխանաբար կազմել են՝ 144.14% և 33.69%:

Այս ռիսկի կառավարման նպատակով ամենօրյա կտրվածքով Բանկում գնահատվում է իրացվելիության վիճակը, վարկերի տրամադրման հնարավորությունները, վերլուծվում են հաճախորդների դրամական միջոցների ակնկալվող հոսքերը: Իրացվելիության ռիսկի ժամանակին բացահայտման նպատակով իրականացվում է մինչև 6 ամիս իրացվելիության կանխատեսում՝ հաշվի առնելով հաճախորդների դրամական հոսքերի շարժը, մինչև 6 ամիս իրացվելիության ճեղքվածի վերլուծություն՝ օգտագործելով սթրես սցենարներ: Իրացվելիության վիճակը բնութագրող տեղեկատվությունը ներկայացվում է Բանկի ղեկավարությանը, ինչն ապահովում է նրանց կողմից արդյունավետ հսկողությունն ու անհրաժեշտ որոշումների ժամանակին ընդունումը:

#### Արտարժութային ռիսկ:

Դրամի կանխատեսվող արժեզրկման հետ կապված փետրվար ամսին հաշվեկշռի արտարժութային կառուցվածքում կատարվեցին էական փոփոխություններ՝ մեծացավ արտարժութային մասի տեսակարար կշիռը, փոխվեց հաշվեկշռի ակտիվների և պասիվների կառուցվածքը: Արտարժութային ռիսկի կառավարման նպատակով խստացվեցին ըստ արժույթների բաց դիրքերի սահմանաչափերը: Այս ռիսկի գրագետ կառավարման արդյունքում Բանկը 03.03.09թ. դրամի արժեզրկման հետևանքով արտարժույթի վերագնահատումից ստացավ 303 մլն դրամ եկամուտ: Արտարժութային ռիսկի կառավարման նպատակով կիրառվել է.

1. GAP և VAR մեթոդներով արտարժութային դիրքերի վերլուծություն,
2. արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների մոնիթորինգ՝ կորուստներից խուսափելու հնարավոր ուղղությունները որոշելու նպատակով:

#### Տոկոսադրույքի ռիսկ:

Մեծ ուշադրություն է դարձվել տոկոսադրույքի ռիսկի կառավարմանը՝ շահույթի վրա տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխության ազդեցությունը մեղմելու նպատակով, մասնավորապես ներգրավման գծով շուկայական տոկոսադրույքների բարձրացման հետ վերանայվել են վարկավորման տոկոսադրույքները, մշտական հսկողություն է իրականացվել տոկոսային ճեղքվածքի Բանկում սահմանված ներքին սահմանաչափի պահպանման ուղղությամբ, իրականացվել է զուտ տոկոսային մարժայի և սպրեդի ամենօրյա մոնիթորինգ:

**2) այն կարևոր դեպքերի նկարագիրը, որոնք տեղի են ունեցել հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև զեկույցը պատրաստելու օրը: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս.**

2009 թվականի առաջին կիսամյակի ընթացքում տեղի են ունեցել նշանակալի իրադարձություններ, որոնք դրական են ազդել Բանկի գործունեության վրա:

«AB Certification» ֆրանսիական անկախ աուդիտորական ընկերության կողմից Բանկին շնորհվել է Որակի կառավարման համակարգի միջազգային ISO 9001:2000 սերտիֆիկատը, ինչը վկայում է Բանկում աշխատանքի կազմակերպման գործընթացի արդյունավետության և միջազգային չափանիշներին համապատասխանության մասին:

Մարտ ամսին World Business Capital ֆինանսական կազմակերպությունը Բանկին տրամադրել է 10 մլն ԱՄՆ դոլարի վարկ՝ 10 տարի մարման ժամկետով, որը ուղղվելու է փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը:

Բանկը հունիս ամսին ընդգրկվեց IFC-ի առևտրի ֆինանսավորման գլոբալ ծրագրում /GTFP/ և միացավ արտաքին առևտրի ոլորտում ֆինանսական ստանդարտ ծառայություններ մատուցող միջազգային բանկերի ցանցին, որոնք նպաստում են երկրի արտաքին առևտրի զարգացմանը: Վարկային գծի ընդհանուր գումարը կազմում է 5 մլն ԱՄՆ դոլար, որը թույլ կտա արտաքին առևտրի ուղղվածություն ունեցող կազմակերպություններին առաջարկել ավելի հարմարավետ և մատչելի բանկային ծառայություններ:

Բանկը հունիս ամսին սկսել է VISA INTERNATIONAL քարտերի տրամադրումը և առաջինն է Հայաստանի բանկային համակարգում, որ առաջարկում է VISA INFINITE քարտեր: VISA քարտերը տրամադրվում են Եվրո, ԱՄՆ դոլար, և ՀՀ դրամ արժույթներով, ընդ որում բանկում ներդրվել է վճարային քարտերով միջազգային գործարքների երկու արժույթներով փոխհաշվարկների իրականացման (ԱՄՆ դոլար և Եվրո) համակարգ, ինչը հնարավորություն է տալիս VISA վճարային քարտերի քարտապաններին, գտնվելով աշխարհի ցանկացած վայրում, իրականացնել գործարքներ առանց արժույթների լրացուցիչ փոխարկումներ կատարելու:

Բանկի գործունեության համար նշանակալի իրադարձություն էր նաև հուլիս ամսին վարչության նոր նախագահի նշանակումը:

**3) թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը:**

Բանկը 2009 թվականի երկրորդ կիսամյակում շարունակելու է ակտիվ գործունեություն ծավալել բանկային ծառայությունների մատուցման շուկայում՝ իր հաճախորդներին առաջարկելով նոր և որակյալ բանկային ծառայություններ: Նախատեսվում է 2009 թվականին իրականացնել պարտատոմսերի երկրորդ թողարկումը:

Ունենալով կայուն ֆինանսական հիմք և անընդհատ աճող ռեսուրսային բազա՝ Բանկը պլանավորում է շարունակել զարգացումը թե՛ կորպորատիվ հաճախորդների, թե՛ ֆիզիկական անձանց մատուցող ծառայությունների շուկայում՝ որպես վատահեղի և կայուն գործընկեր:

## ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Բանկերի, վարկային կազմակերպությունների և ներդրումային ընկերությունների համար

30.06.2009 (չստուգված) \*      2008 (ստուգված)      2007 (ստուգված)      2006 (ստուգված)

<b>Ցուցանիշի անվանումը</b>	<b>Ժամանակաշրջան</b>	<b>Ժամանակաշրջան</b>	<b>Ժամանակաշրջան</b>	<b>Ժամանակաշրջան</b>
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,879,377	5,188,190	4,188,800	2,072,427
Սեփական կապիտալի միջին մեծություն	25,982,628	21,111,669	13,359,841	10,040,505
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	14.47%	24.57%	31.35%	20.64%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,879,377	5,188,190	4,188,800	2,072,427
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	116,753,017	109,027,175	76,455,437	57,990,442
Ակտիվների շահութաբերություն (ROA) %	3.22%	4.76%	5.48%	3.57%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,879,377	5,188,190	4,188,800	2,072,427
Գործառնական եկամուտ	5,573,322	13,902,577	10,102,217	6,924,980
Զուտ շահույթի մարժա (NPM), %	33.72%	37.32%	41.46%	29.93%
Գործառնական եկամուտ	5,573,322	13,902,577	10,102,217	6,924,980
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	116,753,017	109,027,175	76,455,437	57,990,442
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	9.55%	12.75%	13.21%	11.94%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	116,753,017	109,027,175	76,455,437	57,990,442
Սեփական կապիտալի միջին մեծություն	25,982,628	21,111,669	13,359,841	10,040,505
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	4.49	5.16	5.72	5.78
Զուտ տոկոսային եկամուտ	3,832,198	8,896,824	5,648,221	3,416,639
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	80,356,741	82,923,872	57,129,973	38,940,081
Զուտ տոկոսային մարժա (NIM)	9.54%	10.73%	9.89%	8.77%
Տոկոսային եկամուտ	6,484,225	13,054,942	7,890,307	4,933,886
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	80,356,741	82,923,872	57,129,973	38,940,081
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	16.14%	15.74%	13.81%	12.67%
Տոկոսային ծախսեր	2,652,027	4,158,118	2,242,086	1,517,247
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	87,214,302	83,782,958	60,422,430	45,677,792
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	6.08%	4.96%	3.71%	3.32%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,879,377	5,188,190	4,188,800	2,072,427
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	179,252	179,252	144,843	99,385
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	10.48	28.94	28.92	20.85
Սպրեդ	10.06%	10.78%	10.10%	9.35%

\* Հետևյալ ցուցանիշները տարեկանացված են

- 1 Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %
- 2 Ակտիվների շահութաբերություն (ROA) %
- 3 Ակտիվների օգտագործման գործակից (AU), %
- 4 Զուտ տոկոսային մարժա (NIM)
- 5 Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն
- 6 Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր
- 7 Սպրեդ

ՍԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6)

30 Հունիս 2009 թ

« ԱՐՂՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ » ՓԲԸ, \_\_\_\_\_ ք. Երևան, Գ. Լուսավորչի 13

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջան	Ընթացիկ ֆինանսական տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը ընկած ժամանակա-շրջան (աճողական)	Նախորդող համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջան	Նախորդ ֆինանսական տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվը ընկած ժամանակաշրջան (աճողական)
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	3,166,928	6,484,225	3,163,613	5,921,735
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(1,386,060)	(2,652,027)	(1,041,192)	(1,930,649)
<b>Ջուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ</b>		<b>1,780,868</b>	<b>3,832,198</b>	<b>2,122,421</b>	<b>3,991,086</b>
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	523,280	979,564	721,829	1,331,754
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(313,610)	(315,070)	(713)	(1,377)
<b>Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ</b>		<b>209,670</b>	<b>664,494</b>	<b>721,116</b>	<b>1,330,377</b>
Եկամուտ շահարաժիմներից					
Ջուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	257,208	982,054	345,375	896,146
Այլ գործառնական եկամուտներ	6	62,920	94,576	28,179	49,077
<b>Գործառնական եկամուտներ</b>		<b>2,310,666</b>	<b>5,573,322</b>	<b>3,217,091</b>	<b>6,266,686</b>
Ջուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	7	(228,088)	(625,810)	122,759	(133,629)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(942,250)	(1,831,579)	(1,644,124)	(2,440,051)
Այլ գործառնական ծախսեր	9	(415,635)	(807,014)	(295,302)	(548,238)
Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս	10				
<b>Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը</b>		<b>724,693</b>	<b>2,308,919</b>	<b>1,400,424</b>	<b>3,144,768</b>
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	11	(157,118)	(429,542)	(343,571)	(668,813)
<b>Շահույթը (վնասը) հարկումից հետո</b>		<b>567,575</b>	<b>1,879,377</b>	<b>1,056,853</b>	<b>2,475,955</b>
Հաշվարկված շահարաժիմներ, այդ թվում՝ արտոնյալ բաժնետոմսերի գծով սովորական բաժնետոմսերի գծով					
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	12				
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նույնացված շահույթ	12				
<b>Ժամանակաշրջանի զուտ շահույթ</b>					
Այդ թվում՝					
<b>Մայր կազմակերպության բաժնեմաս</b>					
<b>Փոքրամասնության բաժնեմաս</b>					

Բանկի վարչության նախագահի ժ/պ \_\_\_\_\_ Գուրգեն Հարությունյան  
(գործադիր տնօրենի ժ/պ)

Գլխավոր հաշվապահ \_\_\_\_\_ Մանվել Սահակյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.07.09 թ.

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ (ձև քիվ 7)

30 Հունիս 2009 թ

« ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ » ՓԲԸ, ք.Երևան, Գ.Լուսավորչի 13

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար ՀՀ դրամ)

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ
<b>1</b>	<b>Ակտիվներ</b>			
1.1	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	25,687,308	17,643,630
1.2	Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտրոններ		3,838	3,838
1.3	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	12,043,417	7,655,294
1.4	Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ	15		
1.5	Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ	16	63,502,725	72,921,342
1.6	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	17	3,152,696	4,832,240
1.7	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	18		
1.8	Ներդրումներ վերահսկվող անձանց կանոնադրական կապիտալում			
1.9	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	9,424,468	9,760,013
1.10	Հետաձգված հարկային ակտիվներ	11		
1.11	Այլ ակտիվներ	21	1,229,102	376,719
	<b>Ընդամենը՝ ակտիվներ</b>		<b>115,043,554</b>	<b>113,193,076</b>
<b>2</b>	<b>Պարտավորություններ</b>			
2.1	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	16,711,385	14,622,265
2.2	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	69,201,714	70,009,175
2.3	Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	24	802,093	1,511,065
2.4	Առևտրային նպատակներով պահվող պարտավորություն	25		
2.5	Վճարվելիք գումարներ	26	67,543	67,827
2.6	Հետաձգված հարկային պարտավորություններ	11	594,211	594,211
2.7	Պահուստներ	7	115,891	137,900
2.8	Այլ պարտավորություններ	27	567,198	1,058,381
	<b>Ընդամենը՝ պարտավորություններ</b>		<b>88,060,035</b>	<b>88,000,824</b>
<b>3</b>	<b>Կապիտալ</b>			
3.1	Կանոնադրական կապիտալ	28	13,802,404	13,802,404
3.2	Էմիսիոն եկամուտ		1,711,179	1,711,179
3.3	Պահուստներ՝		3,498,206	3,298,503
3.3.1	Գլխավոր պահուստ		963,121	675,308
3.3.2	Վերագնահատման պահուստներ		2,535,085	2,623,195
3.4	Չբաշխված շահույթ (վնաս)		7,971,730	6,380,166
3.5	Կապիտալի այլ տարրեր	29		
	Մայր կազմակերպության պատկանող կապիտալ			
	Փոքրամասնության բաժնեմաս			
	<b>Ընդամենը՝ կապիտալ</b>		<b>26,983,519</b>	<b>25,192,252</b>
	<b>Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ</b>		<b>115,043,554</b>	<b>113,193,076</b>

Բանկի վարչության նախագահի ժ/պ  
(գործադիր տնօրենի ժ/պ)

Գուրգեն Հարությունյան

Գլխավոր հաշվապահ

Մանվել Սահակյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.07.09 թ.



**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
 Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (ձև թիվ 9)  
**30 Դունիս 2009 թ.**

« **ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ** » ՓԲԸ, \_\_\_\_\_ ք.Երևան, Գ.Լուսավորչի 13  
 (բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախորդ ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
<b>1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից</b>	<b>x</b>	<b>x</b>
<b>Դրամական միջոցների գուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը</b>	<b>3,801,108</b>	<b>2,703,056</b>
Ստացված տոկոսներ	5,636,746	6,138,143
Վճարված տոկոսներ	-1,636,375	(2,708,627)
Ստացված կոմիսիոն գումարներ	1,331,754	979,564
Վճարված կոմիսիոն գումարներ	-1,377	(315,070)
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս)	69,235	(38,360)
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնականություններից օգուտ/(վնաս)	784,315	696,407
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ	207,239	52,892
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	-1,628,273	(1,232,726)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր	-962,156	(869,167)
<b>Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից</b>	<b>-2,572,184</b>	<b>3,807,142</b>
<b>Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)</b>	<b>-11,635,712</b>	<b>14,904,938</b>
այդ թվում՝ վարկերի և փոխառությունների նվազում/ (ավելացում)	-14,154,531	14,238,762
առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում)	1,727,781	1,639,342
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում/ (ավելացում)		
այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում)	288,259	(973,166)
<b>Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)</b>	<b>9,063,528</b>	<b>(11,097,796)</b>
այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում)	9,986,833	(7,161,549)
այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում)	-422,370	(3,936,247)
<b>Չուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը</b>	<b>1,228,924</b>	<b>6,510,198</b>
Վճարված շահութահարկ	-993,231	(1,209,964)
<b>Չուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից</b>	<b>235,693</b>	<b>5,300,234</b>
<b>2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից</b>	<b>x</b>	<b>x</b>
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում)		
Սյ աճմանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)		
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)	-988,499	(62,079)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	-573,684	(90,851)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում	596	96
Դրամական միջոցների գուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		
<b>Չուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից</b>	<b>-1,561,587</b>	<b>(152,834)</b>
<b>3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից</b>	<b>x</b>	<b>x</b>
Վճարված շահարժիճներ		
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		
Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)	1,662,297	440,688
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)	474,062	2,548,615
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)		(703,580)
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում		
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում)		
Դրամական միջոցների գուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից		
<b>Չուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից</b>	<b>2,136,359</b>	<b>2,285,723</b>
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	20,142	4,260,595
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ/(նվազում)</b>	<b>830,607</b>	<b>11,693,718</b>
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	18,655,293	25,209,428
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	<b>19,485,900</b>	<b>36,903,146</b>

Բանկի վարչության նախագահի/ժ/պ \_\_\_\_\_ Գուրգեն Հարությունյան  
 (գործադիր տնօրենի/ժ/պ)  
 Գլխավոր հաշվապահ \_\_\_\_\_ Մանվել Սահակյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը **14.07.09 թ.**

**ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

(եռամսյակային)

«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ

01/04/09 թ-ից 30/06/2009 թ.

(հազ. դրամ)

Նորմատիվներ	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	2	3	4
Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը	15,513,583	50,000	խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	23,271,173	5,000,000	խախտում առկա չէ
Ն <sub>1</sub> Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	24.53%	12.0%	խախտում առկա չէ
Ն <sub>2</sub> <sup>1</sup> Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	33.69%	15.0%	խախտում առկա չէ
Ն <sub>2</sub> <sup>2</sup> Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցայահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	144.14%	60.0%	խախտում առկա չէ
Ն <sub>3</sub> <sup>1</sup> Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	18.40%	20.0%	խախտում առկա չէ
Ն <sub>3</sub> <sup>2</sup> Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	93.76%	500.0%	խախտում առկա չէ
Ն <sub>4</sub> <sup>1</sup> Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	2.00%	5.0%	խախտում առկա չէ
Ն <sub>4</sub> <sup>2</sup> Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	3.59%	20.0%	խախտում առկա չէ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը	X	Դրամով - 8% Արտարժույթով - 12 %	խախտում առկա չէ

Կ.Տ.

Բանկի վարչության նախագահի ժ/պ  
(գործադիր տնօրենի ժ/պ)  
Գլխավոր հաշվապահ

Գուրգեն Հարությունյան

Մանվել Սահակյան